Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

16678

323:1
Є-26

Դպ.
~~Ամ.Ա.Ն.33.~~
Ամ. 671

№

ԲԱՆԻՈՐԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 4.

Ս. ՇԱՀՈՒՄԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԸ
ԵՒ
ՍՕՑԻԱԼ-ԴԵՄՕԿՐԱՏԻԱՆ

323.1
Ն-26

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ «ՄՇԱԿ»-Ի

ԹԻՖԼԻՍ
1906 Թ.

Арм. 2-4491а
2-4491а
15 ՀՈՍ 2010
6 SEPT 2006
323.1
Շ-26

Բանվորական գրադարան № 4.

Ս. ՇԱՀՈՒՄԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԸ
ԵՒ
ՍՈՑԻԱԼ-ԴԷՄՈԿՐԱՏԻԱՆ

ՀՈՆԼԴՆԻ
Էլեկտրոն. «Լաբորատորիա» Ամբ. ստ. Ի. Գ. Գ. Գ. Գ.
Ինվ. № 22476

Հրատարակութիւն «Կայծ»-ի
1906

13.07.2013
16678

ТИФЛИСЪ
Электроп. „Гуттенбергъ“ Двор. ул., д. гр. дв.
1906

ՊԵՏ. ԿԱՌ. ԳՐԱԴԱՐԱՆ
Г. Р. Гнотекъ
ZUUP ... ССР
Ա. ԻՄ. Ա. ՄՅԱՏԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
39824-63

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԸ

ԵՒ

ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԻԱՆ

Ազգային հարցը ժամանակակից պետական իրաւունքի ամենարարդ ու ամենահետաքրքիր պրոբլեմներից մէկն է։ Բոլոր այն երկրներում, ուր միևնոյն պետութեան հովանու տակ ապրում են մի քանի ազգութիւններ, այդ հարցը ամենալուրջ կերպով զբաղեցնում է բոլոր քաղաքագէտներին, բոլոր գիտակից քաղաքացիներին։ Ազգային հարցը, իր ժամանակակից իմաստով, գոյութիւն չունէր Եւրոպայում սրանից մի 100 տարի առաջ. նա ամբողջովին ծնունդ է XIX դարի և—առաջին հայեացքից հէնց կարելի է այդ նկատել—ամենասերտ կերպով կապված է ժամանակակից կապիտալիստական արդիւնաբերութեան և բուրժուական հասարակական կարգի հետ։

Ինչումն է կայանում ազգային հարցի էութիւնը և ինչու է նա այդքան զբաղեցնում մարդկանց։

Այդ հարցին զանազան գիտնականներ զանազան պատասխաններ են տալիս. ճըշմարտութիւնը մէկ է, բայց պատասխանները մի քանի։ Եւ դա շատ հասկանալի է։ Ազգային հարցը—հասարակական հարց է, և որպէս այդպիսին նա շօշափում է զանազան հասարակական դասակարգերի շահերը։ Եւ ամեն մի դասակարգ յանձին իր թէօրետիկների ցանկանում է, որ ճշմարտութիւնը այնպէս լինի, ինչպէս այդ ձեռնտու է իրան, այդ դասակարգին։ Եթէ մի որև է դասակարգի շահերին համապատասխանում է իսկական ճշմարտութիւնը, միւս դասակարգերը աշխատում են քօղարկել, խաֆել և չճանաչել այդ ճշմարտութիւնը։ Եթէ «երկու անգամ երկու հաւասար է չորսի» ճշմարտութիւնը,—ասում է մի ռուս գիտնական,—շօշափէր մի որև է դասակարգի շահերը, հաւատացած կարելի էր լինել, որ մինչև օրս այդ ճշմարտութիւնը ճանաչած և ընդունուած չէր լինի բոլոր մարդկանց կողմից։

Ժամանակակից եւրոպական հասարակութիւնները բաժանուում են, ինչպէս յայտնի է, երկու մեծ դասակարգերի՝ բուրժուազիայի և պրոլետարիատի։ Եւ չկայ մի հատ—քիչ թէ շատ խոշոր—հասարակական հարց, որի վերաբերմամբ այդ երկու դասակարգերը առնուազն երկու տարբեր և անտագոնիստ հայեացքներ չունենային։ Բայց

իսկական ճշմարտութիւնը ի հարկ է լինում է և չի կարող չլինել այդ երկուսից միայն մէկի կողմը և այդ մէկը, դժուար չէ հասկանալ—որ ներկայումս պրոլետարիատն է, որովհետև ներկայ հասարակութեան մէջ ճշմարտութիւնը համապատասխանում է միայն պրոլետարիատի դասակարգային շահերին, իսկ բուրժուազիայի շահերը յենւում են միմիայն և ամբողջովին ստի ու կեղծիքի վայ։ Կար ժամանակ, ի հարկէ, երբ բուրժուազիան էլ առաջադէմ դասակարգ էր, երբ նրա դասակարգային շահերի համար էլ օգտակար էին լինում հասարակական ճշմարտութիւնները։ Այդ այն ժամանակն էր, երբ նա՝ գոյացած ֆէօդալական հասարակութեան արգանդում, ճնշած այդ հասարակութեան մէջ տիրապետող ազնուականութեան ու հոգեորականութեան «ճշմարտութիւնների» լծի տակ, ուզում էր ազատուել նրանցից և ստեղծել նոր, աւելի ազատ հասարակական կարգեր։ Բայց այդ ժամանակը անցաւ անդառնալի կերպով, նա դարձել է այժմ Եւրոպայում իր օբյեկտիւ դրութեամբ մի յետադէմ ու ՁԼասակար դասակարգ և այդ պատճառով հասարակական ճշմարտութիւնները ՁԼասակար և անմատչելի են այժմ նրա համար։

Այդ բանը առանձնապէս ճիշտ է մեզ զբաղեցնող ազգային հարցի վերաբերմամբ։ Պրոլետարիատը, յանձին իր թէօրետիկնե-

րի, գեղեցիկ կերպով և միանգամայն պարզ՝ լուծում է ազգային հարցը։ Բուրժուական գիտնականները ամեն կերպ աշխատում են մթնացնել խնդիրը, ստեղծում են ազգային հարցի շուրջը մի միստիքական քող, ներկայացնում են ազգությունը, որպէս մի ֆետիշ, իսկ ազգային հարցը, որպէս մի անլուծելի հանելուկ։ Ինչո՞ւ,—որովհետև ազգային հարցի շուրջը թանձրացած մառախուղը շատ օգտակար է բուրժուազիայի համար. նա, «անկարող» լինելով պարզել «գիտնականօրէն» այդ հարցի էությունը, այնուամենայնիւ շատ գեղեցիկ կերպով շահագործում է իր դասակարգային տեսակէտից այդ հարցի անորոշությունը, անգիտակից ժողովրդական մասսաների ազգային ընազդները, ազգային նախապաշարմունքները և այլն։

Պրոլետարիատը ամենախիստ կերպով շահագրգռած է՝ պատռելու ազգային հարցից նրա միստիքական քողը և մերկացնելու բուրժուական իդէոլոգների խորամանկ դաւերը։

Նախ և առաջ, ինչ բան է ազգությունը։

Կարող էք երևակայել, որ մինչև այժմ բուրժուական գիտնականները չեն կարողացել պարզել իրանց համար այդ հարցը։ Թւում է, թէ դա այնքան էլ դժւար չէ։ Ամեն ոք գիտէ և տեսնում է, ինչ բան է ազգությունը, ամեն ոք իր կեանքում տե-

սած կը լինի տասնեակ ազգություններ, բայց բուրժուական գիտնականները երդւում են, որ իրանք չգիտեն դեռ, թէ ինչ բան է ազգությունը։ Նրանցից մէկը, որ մի ամբողջ գիրք է գրել այդ մասին (Багешотъ —«Развитіе націй, въ связи съ наслѣдственностью и естественнымъ подборомъ»), երկար ու բարակ բացատրություններից յետոյ բացականչում է. «Բայց ինչ բան են ազգությունները, այդ ինչ մարդկային խմբակցություններ են, որ մեզ այդքան ծանօթ են թւում, բայց որ միևնոյն ժամանակ այնքան անհասկանալի են մեզ համար։ Դա մի շատ դժւարին հարց է և ես յանձն չեմ առնում լիովին պատասխանել այդ հարցին»։ Մի ուրիշը (Проф. Гессенъ —«Народъ и нація» աշխատության մէջ) տքնում է մի կերպ պատասխանել այդ հարցին։ Ինչ բան է ազգությունը. արդեօք միևնոյն ծագումն ունեցող մարդկանց մի բաղմություն.—բայց կան տարբեր ազգեր, որ միևնոյն ծագումը ունեն և կան ազգեր, որ միացնում են իրանց մէջ տարբեր ծագում ունեցող մասսաներ։ Վերջապէս, եթէ հեռուն գնալու լինենք, կը տեսնենք թերևս, որ բոլոր ազգերն էլ միևնոյն, ընդհանուր ծագումն ունեն։ Արդեօք ազգությունը մի տերրիտորիայում բնակւող մարդկային խմբակցություն է.—բայց կան ազգեր, որ սեփական տերրիտորիա չունեն և կան տեր-

ըիտորիաներ, որ ընակւած են մի քանի ազգերով։ Գուցէ ազգութեան «կոնստիտուտիւ մոմենտը» (պրոֆէսորի խօսքն է այդ), այսինքն որոշիչ մոմենտը, լեզուն է.—բայց կան ազգեր, ասում է շարուած պրոֆէսորը, որ չունեն սեփական լեզու և կան ազգեր, որ խօսում են մի քանի լեզուներով։ Գուցէ կրօնը.—ոչ, կրօնի մասին էլ կարելի է ասել նոյնը, ինչ որ լեզուի մասին։ Եւ ահա շատ փնտրելուց ու տանջւելուց յետոյ պրոֆէսորը գտնում է. ազգութեան կոնստիտուտիւ մոմենտը—«ազգային ինքնագիտակցութիւնն է». ուրիշ խօսքով, ազգութիւնն նշանակում է ազգային ինքնագիտակցութիւն։ Ահա ձեզ պատասխան, բարեհաճեցէք մի բան հասկանալ այդ պատասխանից։ Ազգային հարցը լուծելու համար նախ հարկաւոր է հասկանալ, ինչ բան է ազգութիւնը, և ձեզ կամ պատասխանում են, որ չեն հասկանում ինչ է, կամ ասում են՝ ազգութիւնը—ծագումը չէ, տերրիտորիան չէ, լեզուն չէ, կրօնը չէ, և ոչ էլ դրանց ամբողջութիւնը, կամ զանազան կոմբինացիաները, այլ ազգային ինքնագիտակցութիւնը, կամ, ուրիշ բուրժուական գիտնականների ասելով, «ազգային գաղափարը», «ազգային ոգին» և այլն։ Տալիս են արդեօք այդ տեսակ պատասխանները որև է հնարաւորութիւն հասկանալու. ազգային հարցի էութիւնը և լուծելու ազգային հարցը։ Բոլորովին ոչ։ Նրանք, ինչպէս ասացինք, միայն մի միստիկական քօղ են հագցնում այդ հարցի վրայ, միայն մթնացնում ու խըճճում են հարցը։

Բայց մարք սիստական մտածողութիւնը պատմական-մատերիալիստական անալիզը պատռում է այդ միստիկական քօղը և մերկացնում է ազգային հարցի ըէալ բովանդակութիւնը։

Բուրժուական իդէալիստական մտածողութեանը յատուկ է ամեն մի հասարակական երևոյթ ներկայացնել որպէս մի ֆետիշ։ Մարքսը մերկացրեց բուրժուական աշխարհի ամենամեծ և ամենահիմնական ֆետիշը—ապրանքը։ Նա ցոյց տուեց, որ ապրանքը երկու կողմ ունի, մէկը այսպէս ասած՝ բնական, միւսը՝ հասարակական։ Ապրանքը մի կողմից որոշ նիւթ է, միւս կողմից որոշ հասարակական յարաբերութիւն։ Հասարակագէտի համար ապրանքը հետաքրքիր է իր երկրորդ կողմով, որպէս հասարակական յարաբերութիւն, որպէս փոխանակական արժէք. նրա միւս՝ բնական, կամ նիւթական կողմը վերաբերում է բնագիտութեանը։ Մարքսը կարողացաւ ըմբռնել և ըմբռնելի դարձնել ժամանակակից հասարակութեան ամենախոշոր սոցիալական պրոբլեմը միմիայն շնորհիւ իր այդ անալիզի, շնորհիւ հասարակական երևոյթի զուտ հասարակա-

կան մոմենտի և նրա հիմքը կազմող բնական մոմենտի որոշակի բաժանման։

Ճիշտ այդպէս պէտք է վարուել և «ազգութիւն» հասկացողութեան հետ։

Ազգութիւնը մի կողմից մի որոշ բնական երևոյթ է, իր բնական՝ նիւթեղէն կամ հոգեբանական բովանդակութեամբ, միւս կողմից՝ նա մի որոշ հասարակական երևոյթ, հասարակական յարաբերութիւն է։ Ուրիշ խօսքով, մի կողմից՝ նա միևնոյն տերրիտորիայի վրայ խմբուած, շատ թէ քիչ ընդհանուր ծագումով կապած, միևնոյն լեզուով խօսող, շատ թէ քիչ ընդհանուր կրօնով, բարքերով ու տրադիցիաներով ապրող միլիօնաւոր, երբեմն տասնեակ և նոյն իսկ հարիւր միլիօնաւոր մարդկանցից բաղկացած մի բազմութիւն է, միւս կողմից՝ նա մի հասարակական կամ պետական օրգանիզմի տեսակն է։ Ապրանքը, որպէս աշխատանքի արդիւնքի մի տեսակը, որպէս ժամանակակից մի հասարակական կատեգորիա, միաժամանակ և սպառողական արժէք է և փոխանակական արժէք, բայց մենք գիտենք, որ ամեն մի սպառողական արժէք միաժամանակ և փոխանակական արժէք չէ։ Ապրանքի այդ երկու կողմը ներկայ պատմական շրջանում ընդհանրապէս վերցրած նոյնանում են։ Ճիշտ այդպէս ահա, ներկայ պատմական շրջանում ընդհանրապէս ազգութիւն գաղափարը՝

նեղ, զուտ բնական իմաստով վերցրած, նոյնանում է ազգութիւն-հասարակական գաղափարի, կամ ազգութիւն-պետութիւն գաղափարի հետ։ Եւ յիրաւի ժամանակակից ազգերի մեծ մասը կամ պետութիւն են ներկայացնում, կամ համեմատաբարնոր դարձել են պետութիւն լինելուց և կամ ձգտում են պետութիւն դառնալ։

Բայց եթէ այդ այդպէս է ներկայ պատմական շրջանում, նա այդպէս չի եղել անցեալում և հաւանօրէն այդպէս չի լինի ապագայում։ Որպէսզի հասկանալի լինի, թէ ինչպէ՞ս է եղել առաջ, ինչպէ՞ս է ստեղծել ներկայ դրութիւնը և ի՞նչ ուղղութեամբ կարող է գնալ յետագայ զարգացումը, հարկաւոր է մի համառօտ ակնարկ ձգել ժամանակակից եւրոպական ազգերի անցած ճանապարհի վրայ, միշտ ի նկատի ունենալով, ազգութիւն գաղափարի յիշեալ երկու կողմերի տարբերութիւնը։

Ամեն մի պետութեան, ամեն մի հասարակական օրգանիզմի, հասարակական միութեան իմաստը, նպատակը կայանում է նրանում, որ մարդիկ որոշ պայմաններով միանում են միմեանց հետ, որպէսզի ընդհանուր ոյժերով, փոխադարձ աշխատութեամբ «գոյութեան կռիւ» մղեն ընութեան և ուրիշ նման միութիւնների հետ։ Այդ միութիւնների, հասարակական օրգանիզմների չափերը և ձևերը զանազան ժամա-

նակներ եղել են շատ տարբեր։ Քաղաքակրթութեան պատմաբանները պատմում են, որ եղել է նաև ժամանակ, նախապատմական ամենահեռաւոր շրջաններում, որ մարդիկ գոյութեան կռիւ են մղել իրրև անհատներ։ Նրանք նկարագրում են նախամարդուն, որպէս մի վայրենու, որ թափառելիս է եղել անտառների մէջ, զինուած մի փայտի կտորով, որով նա պոկելիս է եղել ծառի պտուղները, կամ գետնից հանելիս է եղել բոյսերի արմատներ և այդպիսով սնունդ է հայթհայթել իր համար։ Բայց ժամանակի ընթացքում, մարդկանց բազմանալու հետ, շնորհիւ փայտի փոխարէն մի նոր «արդիւնաբերութեան գործիքի», օր., նետ ու աղեղի գտնուելուն, մարդիկ միացել են, կազմել, մեծ մասամբ, որսորդական խմբակներ, որոնք իրանց գոյութեան կռիւը մղել են արդէն, որպէս մի հաւաքական մարմին, մի հասարակական միութիւն։ Այն օրից, երբ արդէն կազմուել է առաջին մարդկային խմբակցութիւնը, հիմք է դրուել մարդկանց հասարակական կեանքին, հասարակական յարաբերութիւններին։ Ինչքան էլ փոքր լինի այդ խմբակցութիւնը, այնուամենայնիւ այդտեղ ծնունդ է առնում արդէն մարդկանց փոխադարձ պարտականութիւնների և իրաւունքների, որոշ իրաւական նորմաների խնդիրը։ Այդ մտքով այդ առաջին

որսորդական խումբը կարելի է համարել ժամանակակից պետութեան սաղմը։

Դրանից յետոյ պատմական զարգացման ընթացքում մենք տեսնում ենք, որ ստեղծուում են «գոյութեան կռիւ մղող» աւելի խոշոր մարմիններ։ Բանի գնում այնքան աւելի ու աւելի հասարակական խմբակցութիւններ կազմող անհատների թիւը շատանում է, որոշ իրաւունքներով ու պարտաւորութիւններով միմեանց հետ, մի մարմնի մէջ, կապակցող մարդկանց թիւը աւելանում է և փոխանակ մի որսորդական խմբի մենք տեսնում ենք, օր., մի համայնք՝ որպէս մի ամբողջացրած տնտեսական-հասարակական օրգանիզմ։ Դրանից աւելի յետագայ շրջաններում մենք տեսնում ենք արդէն՝ մի քանի հարևան համայնքները միմեանց հետ կապող նոր, աւելի մեծ հասարակական խմբակցութիւններ, շատ տեղեր, օր., ցեղային միութիւններ։ Իսկ դրանից յետոյ, պատմական յետագայ շրջանում, այդ ցեղերի միութիւնից առաջացան հետզհետէ ժամանակակից ազգերը։ Այդ վերջին պրոցեսսը, կարելի է ասել, կատարուել է արդէն մեր աչքերի առաջ, վերջին հազարամեակի ընթացքում։ Մենք գիտենք, օր., ինչպէս Ֆրանկների, Գերմանների և սլաւոնական մի շարք ցեղեր (племена), որոնցից ամեն մէկը մի առանձին հասարակական օրգանիզմ էր ներկայացնում

բաժանված միլիոններից և թշնամի միլիոններին, միացան և ստեղծեցին ժամանակի ընթացքում ներկայիս ազգային պետութիւնները (Ֆրանսիան, Գերմանիան, Ռուսաստանը)։

Ահա համառօտ ու սքեմատիկ կերպով, ընդհանուր գծերով, այն ճանապարհը, որով առաջացել են ներկայ ազգերը։ Հետզհետէ տնտեսական զարգացումը աւելի ու աւելի սերտ կապեր է հաստատում մարդկանց մէջ և ստեղծում աւելի ու աւելի խոշոր տնտեսական-հասարակական օրգանիզմներ։ Դա ընդհանուր պատմական տենդենցիան է։

Այժմ հարց տանք, արդեօք յանձին ներկայ ազգային պետութիւնների այդ զարգացումը հասե՞լ է իր վերջնական կէտին և կանգ է առել, թէ՞ նա դեռ կը շարունակէ իր գործը, ստեղծելով յետագայ, նոր ու աւելի խոշոր օրգանիզմներ, նոր պետական ձևեր։ Անկասկած, կը շարունակէ։ Մենք տեսնում ենք, որ ներկայ ազգային պետութիւններին կից գոյութիւն ունեն համեմատաբար նոր ժամանակների ծնունդ՝ մի քանի ազգութիւններից բաղկացած պետութիւններ, ինչպէս, օր., Շվեյցարիան, Աւստրիան, Ռուսաստանը։

Հին և միջին դարերում էլ, ինչպէս յայտնի է, գոյութիւն են ունեցել պետութիւններ, որ բաղկացած են եղել երբեմն մի քանի ազգութիւններից, բայց նրանք պետութիւններ չեն եղել այն մտքով, ինչպէս այդ բառը մենք գործ ենք ածում այստեղ, այսինքն նրանք չեն եղել տնտեսական հասարակական օրգանիզմներ, նրանք կրել են միշտ ժամանակաւոր բնաւորութիւն և ստեղծել ու քանդել են միշտ արհեստական կերպով, այս կամ այն տշխարհակալի, բռնակալի քմահաճոյքով։ «Այդ տեսակ պետութիւնները,—ասում է Կարլ Կաուցկին,—ներկայացնում էին տարբեր համայնքների, շրջանների ու մարկերի մի կոնգլոմերատ, որոնք շատ քիչ յարաբերութիւններ ունէին միմեանց հետ. նրանք իրանք տնօրինում էին իրանց ներքին գործերը, իրանք ամեն մէկը առանձին յարաբերութիւններ էին պահպանում կենդրոնական իշխանութեան հետ և այդ յարաբերությունները համարեա բացառապէս վերաբերում էին հարկերի չափը որոշելու խնդրին, որ կենդրոնական իշխանությունը գործադրում էր ազատ, իր գիտցածի պէս։ Այդ հասարակական խմբակցութիւններից իւրաքանչիւրը կարող էր պատկանել մի ազգութեան, իսկ կենդրոնական իշխանությունը մի ուրիշի—դա չէր խանգարում գործին։ Այդ պատճառով էլ այդ տեսակ պետութիւնների մէջ ներքին կապը շատ թոյլ էր։ Մի որեւ է երջանիկ այխարհակալ կարող էր մի գիշերուայ ընթացքում ստեղծել մի համաշխարհային պետութիւն եւ միայն մի կորցրած ճակատամարտ ընդմանակ էր փլրել,

այդ պետութիւնը հազարաւոր ատոմների»։ Պարզ է, որ մեր խօսքը այդ տեսակ արհեստական «կօնգլոմերատներին» չի վերաբերում։ Մենք խօսում ենք այսպէս ասած «օրգանական» պետութիւնների կամ պետութիւն-հասարակական-անտեսական օրգանիզմների մասին։ Այդ տեսակ միջազգային պետութիւնները համեմատաբար նոր ժամանակի ծնունդ են և—կաւելացնենք խակոյն—էնց այդ նոր պետութիւնների սահմաններում է, նրանց ուրոյն սոցիալական և քաղաքական պայմաններով, որ ծնունդ է առել մեզ զբաղեցնող ժամանակակից ազգային հարցը։

Ուրեմն, ի՞նչ նոր բան են ներկայացնում այդ պետութիւնները, ինչպէ՞ս է ծնունդ առել նրանց մէջ և ինչո՞ւմն է կայանում ազգային հարցը։

Պատասխանելու համար այս հարցին մենք նորից պէտք է դառնանք պատմական անցեալին։

Որպէս զի հնարաւոր լինէր մարդկային հասարակական կեանքը, բացի որոշ՝ արդիւնագործութեան նիւթական միջոցներից, հարկաւոր էր նաև, որ մարդիկ հասկանային միմեանց, ուրիշ խօսքով, հարկաւոր էր ունենալ լեզու, խօսելու ընդունակութիւն։ Լեզուն այդպիսով հասարակական կապակցութեան հիմնական և անհրաժեշտ պայմաններից մէկն է։ Երբ որ մարդկութիւնը

բաղկացած էր հին ժամանակները, հնթադրենք, մանր որսորդական խմբերից, ամեն մի այդ տեսակ խմբակ կարող էր ունենալ իր առանձին լեզուն, բայց այդ բաղմաթիւ առանձին լեզուները, հաւանօրէն, պէտք է պարունակէին իրանց մէջ շատ աննշան թիւով խօսքեր, կամ աւելի ճիշտ գուցէ, նրանց տեղը բռնող հնչիւններ։ Ժամանակի ընթացքում, երբ տնտեսական զարգացումը մերձեցնում էր մարդկանց և հաստատում նոր, ապագայ հասարակական մարմնի նիւթական կամ բնական-հոգեբանական հիմքերը, այդ հիմքերի թւում պէտք է լինէր և լեզուի ընդհանրացումը։ Եւ այդպէս էլ լինում էր։ կամաց-կամաց դարերի ընթացքում ասոցիացիայի միջոցով մշակւում էր կապակցութիւն կազմող մարդկանց մէջ ընդհանուր լեզու։ Մենք գիտենք, ի միջի այլոց, թէ ինչպէս զանազան ցեղային բարբառներից ստեղծւել են ժամանակակից ազգային լեզուները, բարբառներ, որ մինչև այժմ էլ դեռ գոյութիւն ունեն շատ տեղեր։

«Լեզուն,—ասում է Կարլ Կաուցկին,—արդիւնաբերութեան ամենակարևոր միջոցներից մէկն է», և իսկապէս, բաւական է դիտել ժամանակակից պետութիւնների կեանքը, հասկանալու համար թէ որպիսի խոշոր նշանակութիւն ունի լեզուն հասարակական յարաբերութիւնների մէջ։ Բայց միայն լեզուն չէ, որ հարկէ, որ կազմում է

ZOOM-ՄՍՍՌ
Ա. Մ. Ա. Մասիսյան

հասարակական կեանքի անհրաժեշտ հոգեբանական նախապայմանը։ Ընդհանուր կեանքը տասնեակ ու հարիւրաւոր դարերի ընթացքում, ստեղծում է մարդկանց մէջ նաև այլ կարգի հոգեկան կապեր։ Ընդհանուր մտածողութեան եղանակ, աշխարհայեացք, կրօնական հասկացողութիւններ, տրադիցիաներ, սովորութիւններ և այլն։

Այդ բոլորը՝ լեզուն, կրօնը և այլն, տընտեսական զարգացման հետ ձեռք-ձեռքի տուած, ընթացել են անարգել և անդադար կերպով, մինչև որ ստեղծել են ժամանակակից ազգերը։ Այժմ, երբ միևնոյն տնտեսական օրգանիզմի մէջ, միևնոյն պետութեան սահմաններում միանում են մի քանի ազգեր, բնականօրէն հասարակական-հոգերանական այդ հիմունքների ընդհանրացման գործը պէտք է շարունակէր առաջ գնալ։ Միևնոյն պետութեան հպատակների համար միմեանց հասկանալը, ընդհանուր լեզու ունենալը և ամեն կողմից հոգեկան մերձեցումը, ընդհանուր բարքերի, տրադիցիաների մշակումը—նոյնքան և գուցէ նոյնիսկ աւելի անհրաժեշտ են։ Եւ ընդհանրացման, հաւասարեցման, նիվելլիրովկայի տենդենցիան կենդանի է ներկայումս բոլոր այդ պետութիւնների մէջ, և հէնց այդ տենդենցիան է, ընդհանրացման այդ

պրոցեսն է, որի միջից ծնունդ է առել ժամանակակից ազգային պրոբլեմը։

Տեսնենք, թէ ինչպէս։

Մենք առաջինը, որ ժամանակակից մի քանի ազգութիւններից բաղկացած, կամ ինչպէս անուանեցինք, միջազգային պետութիւնների գոյութիւնը կապւած է ժամանակակից կապիտալիստական արդիւնաբերութեան զարգացման հետ։ Այդ արդիւնաբերութիւնը XIX դարի ընթացքում դուրս եկաւ ազգային շուկաների, ազգային օրգանիզմների սահմաններից և տարածուեց միջազգային, համաշխարհային շուկայի վրայ։ Պետութիւնների անխուսափելի մրցումը այդ շուկայում, մի կողմից, և ազգային արդիւնաբերութեան համար աւելի ընդարձակ ներքին շուկայ ապահովելու ձգտումը, միւս կողմից, անհրաժեշտ դարձրին առանձին պետութիւնների սահմանների ընդլայնումը։ Որքան աւելի խոշոր լինի և ուժեղ պետութիւնը, այնքան աւելի լաւ կարող է նա մրցել միւս պետութիւնների հետ։

Ով քիչ թէ շատ ծանօթութիւն ունի ժամանակակից տնտեսագիտութեան հետ, նրա համար կաբիք չկայ ապացուցելու այդ։

Ամեն մի պետութիւն ձգտում էր լայնացնել իր սահմանները, կամ, եթէ մի որևէ արտաքին, եթէ կարելի է ասել, պատահական պատճառով նրանք լայնացած էին

լինում (ինչպէս, օր., Աւստրիական ազգերի միացումը տաճկական յարձակումների պատճառով)—ձգտում էր պահպանել իր մեծութիւնը, առանց հարցնելու, թէ այն նոր տարրերը, որ մտնում են պետութեան կազմի մէջ պատկանում են միևնոյն ազգութեան թէ, մի քանի ազգերի։ Այդպիսով, ներկայ կապիտալիստական զարգացումն էր, որ փշրեց հին ազգային պետութեան սահմանները և անհրաժեշտ դարձրեց նոր միջազգային պետութեան գոյութիւնը։ Բայց ամեն մի հին ձև, ինչքան էլ նա վճռական կերպով դատապարտած լինի ոչնչացման, այնու ամենայնիւ առանց կռիւ, առանց դիմադրութեան չէ, որ տեղի է տալիս նոր ձևերի։ Առանց դիմադրութեան չէր, օրինակ, որ Ռուսաստանի հին ցեղային իշխանութիւնները խոնարհւում էին սկսող Մոսկովեան ազգային պետութեան առաջ։ Ճիշտ նոյնպէս կռիւով ու դիմադրութեամբ են այժմեան ազգային օրգանիզմները ենթարկւում նոր միջազգային պետական օրգանիզմների պահանջներին։

Եւ ահա այդ հնի և նորի, ազգային և միջազգային սկզբունքների մրցումը կամ ընդհարումն է, որ առաջացնում է ազգային հարցը, որպէս պետական իրաւունքի խնդիր։

Ուրիշ խօսքով՝ ազգային հարցի էութիւնը կայանում է նրանում, թէ ինչպէս դասաւորել ժամանակակից միջազգային պետութիւնների մէջ առանձին ազգերի, կամ աւելի ճիշտ՝ զանազան ազգերի պատկանող հպատակների՝ վիճակը, ինչպիսի նորմաներ մշակել նրանց փոխադարձ յարաբերութիւնների և նրանց ու պետական իշխանութեան յարաբերութիւնների համար, որպէսզի երկրի սոցիալ-տնտեսական կեանքը նորմալ ընթացք ստանայ, որպէսզի պետութիւնը որպէս մարդկային գոյութեան կռիւ մի որոշ կազմակերպութիւն՝ կարողանայ ծառայել իր նպատակին։

Նախկին պատմական շրջաններում, երբ պետական-քաղաքական կեանքի մի ձևից անցնում էին դէպի մի ուրիշը, կռիւը հնի և նորի մէջ, հին ձևերի ոչնչացումը և նորերի կառուցումը այնքան սուր ընթացք չէր ստանում, ինչքան այժմ։ Տնտեսական զարգացման պրոցէսը և նրա առաջացրած յեղաշրջումները հասարակական քաղաքական ձևերի մէջ ընթանում էին շատ թէ քիչ դանդաղ, էվոլիւցիոնական ճանապարհով։ Հետզհետէ լայնանում և բարդանում էին մարդկանց հասարակական յարաբերութիւնները, հարևան հասարակական միաւորները աւելի ու աւելի սերտ կապակցութեան մէջ էին մտնում և այդպիսով կամաց-կամաց, թերևս սմբողջ հազարամեակների ընթացքում մշակւում էին՝ ընդհանուր լեզուն, ընդհանուր սովորու-

թիւնները և այլն, մի խօսքով, էվոլիւցիայի ճանապարհով պահանջների զարգացման հետ զուգընթացաբար զարգանում էին և հասունանում նոր հասարակական ֆորմացիաների բնական-հոգեբանական հիմունքները։

Ժամանակակից կապիտալիստական տնտեսութիւնը այդ կողմից էլ ցոյց տուեց իր իր եզակի յեղափոխական բնաւորութիւնը։ Այստեղ էլ նա բերից իր հետ այն խոր ոչ աղաղակող հակասութիւնները, որ յատուկ են նրան ընդհանրապէս։ Այդ հակասութիւնները կայանում են նրանում, որ խոշոր և ուժեղ միջազգային պետութիւններ ստեղծելու պահանջը շնորհիւ կապիտալիզմի զարգացման՝ զարգանում է աւելի արագ, քան կարող են զարգանալ դրա համար՝ անհրաժեշտ բնական-հոգեբանական հիմունքները։ Մենք յիշեցինք վերև, որ մարդկանց կապակցութեան և յարաբերութիւնների ամենակարևոր միջոցներից մէկն է — լեզուն։ Եւ լեզուի ընդհանրութիւնը և միակերպութիւնը յատուկ է եղել բոլոր անցած հասարակական ֆորմացիաներին։ Մինչդեռ այժմ անկարելի է երազել՝ ստեղծել ասիմիլիացիայի միջոցով անհրաժեշտ արագութեամբ մի ընդհանուր լեզու այն մի քանի լեզուներից, որոնցով խօսում են մի պետութեան մէջ մնացող զանազան ազգութիւնները։ Այն ինչ լեզուի միակերպութիւնը,

կրկնում ենք, շատ և շատ կարևոր է ժամանակակից կապիտալիստական պետութեան համար։ Տարբեր լեզուները դժուարացնում են մարդկանց արագ և բազմապիսի տնտեսական յարաբերութիւնները, դժուարացնում են մի կենդրոնացած արմիայի (զօրքի) գոյութիւնը, որ անհրաժեշտ է ներկայ կապիտալիստական պետութեան համար, դժուարացնում է դատավարութեան և ադմինիստրացիայի գործը, մաքսային յարաբերութիւնները միւս պետութիւնների հետ և այլն և այլն։ Բնականաբէս, անհրաժեշտ է լինում, որ լեզուներից մէկը ճանաչի իրրև պետական լեզու և այդ պատճառով իշխող ազգութիւնը, աւելի ճիշտ ասած՝ իշխող ազգութեան բուրժուազիան, որը ամենից շատ շահագրգռած է ընդհանուր լեզուով, ձգտում է փոխանցել իր լեզուն միւս ազգութիւններին։ Այն՝ ինչ որ պէտք է կատարէր տարերային կերպով, էվոլիւցիայի ճանապարհով, ուզում են անել այժմ արհեստական կամ գունդ կերպով։ Մի ենայն բանը տնդի ունի ազգային կեանքի միւս արտայայտութիւնների վերաբերմամբ — կրօնների, ազգային տրադիցիաների, բարքերի ու սովորութիւնների և այլն։ Զգալով, այսպէս ասած, հարթել այդ բոլոր էլեմենտները, ոչնչացնել բոլոր տարբերութիւնները, որ խանգարում են պետութեան զանազան մասերի ընտ կարելոյն աւե-

լի սերտ մերձեցման ու համախմբման, ներկայ կապիտալիստական հասարակութիւնը անհրաժեշտօրէն առնում է դէպի բռնութիւն և ստեղծում է մի պետութեան մէջ ապրող ազգերի միջև ընդհարումներ և թշնամութիւն ազգային հողի վրայ։

Այդպիսով, մի կողմից, երևան է գալիս խոշոր միջազգային պետութիւնների անհրաժեշտութիւնը, միւս կողմից՝ ազգային դժգոհութիւնների, բռնութեան ու հալածանքների անխուսափելիութիւնը։ Դա, ինչպէս տեսնում էք, մի խոշոր հակասութիւն է, մի հակասութիւն, որ սերտ ու անբաժան կերպով կապած է ժամանակակից կապիտալիստական տնտեսութեան հետ։

Մենք գիտենք այդ տնտեսութեան հիմնական հակասութիւնը—մի կողմից՝ խոշոր արդիւնաբերութեան անհրաժեշտութիւնը և օգտակարութիւնը, ազգային հարստութեան հսկայական աճումը, միւս կողմից՝ ուժեղ ու մահացու մրցումը, մասսաների պրոլետարիզացիան, վարձու աշխատանքի շահագործութիւնը և այլն։ Մեզ զբաղեցնող ազգային հակասութիւնը մի մասն է այդ հիմնական, ընդհանուր հակասութեան, որ յատուկ է ժամանակակից սոցիալական կարգերին, և բղխում է այդ հակասութիւնից։

Բնական անհրաժեշտութեամբ առաջացող, պատմական տենդենցիայով պայմանաւորող այդ ազգային անտագոնիզմով օգտւում են միշտ առանձին ազգերի իշխող դասակարգերը, բուրժուազիաները և աշխատում են, շահագործական նպատակներով, աւելի խորացնել, ուժեղացնել այդ անտագոնիզմը։ Դրա ամենակարևոր ու ամենաֆաստակար արտայայտութիւններից մէկն այն է, որ երբեմն այս կամ այն ազգութիւնը խորթ է յայտարարւում պետութեան մէջ՝ տիրող դասակարգի կողմից և սկսւում են բացի լեզուական, կրօնական և այլն նաև քաղաքական ճնշումներ և սահմանափակումներ։ Օգտւելով իր ոյժից, գերակշռող ազգութեան տիրող դասակարգը, յենւելով պետական մեքենայի վրայ, զբաղկում է այս կամ այն մանր ազգութիւնը որոշ քաղաքական իրաւունքներից և ստեղծում է նրա համար մի ժողովրդական կացութիւն, որպիսին է, օր., հրէայ ազգի դրութիւնը Ռուսաստանում։

Այդ հանգամանքը աւելի ևս սուր, աւելի ևս պատմական ընդհանրութիւն է տալիս ազգային հարցին։

Ինչպէ՞ս լուծել այդ ազգային հակասութիւնները—ահա մի հարց, որ դնում է իր առաջ ազգային պրոբլեմ անուն տակ ժամանակակից պետական իրաւունքը։ Դիմենք այդ հարցին։

Զանազան դասակարգեր զանազան պատասխաններ են տալիս այդ հարցին, զա-

լի սերտ մերձեցման ու համախմբման, ներկայ կապիտալիստական հասարակութիւնը անհրաժեշտօրէն առնում է դէպի բռնութիւն և ստեղծում է մի պետութեան մէջ ապրող ազգերի միջև ընդհարումներ և թշնամութիւն ազգային հողի վրայ։

Այդպիսով, մի կողմից, երևան է գալիս խոշոր միջազգային պետութիւնների անհրաժեշտութիւնը, միւս կողմից՝ ազգային դժգոհութիւնների, բռնութեան ու հալածանքների անխուսափելիութիւնը։ Դա, ինչպէս տեսնում էք, մի խոշոր հակասութիւն է, մի հակասութիւն, որ սերտ ու անբաժան կերպով կապված է ժամանակակից կապիտալիստական տնտեսութեան հետ։

Մենք գիտենք այդ տնտեսութեան հիմնական հակասութիւնը—մի կողմից՝ խոշոր արդիւնաբերութեան անհրաժեշտութիւնը և օգտակարութիւնը, ազգային հարստութեան հսկայական աճումը, միւս կողմից՝ ուժեղ ու մահացու մրցումը, մասսաների պրոլետարիզացիան, վարձու աշխատանքի շահագործութիւնը և այլն։ Մեզ զբաղեցնող ազգային հակասութիւնը մի մասն է այդ հիմնական, ընդհանուր հակասութեան, որ յատուկ է ժամանակակից սոցիալական կարգերին, և բղխում է այդ հակասութիւնից։

Բնական անհրաժեշտութեամբ առաջացող, պատմական տենդենցիայով պայմանաւորող այդ ազգային անտագոնիզմով օգտւում են միշտ առանձին ազգերի իշխող դասակարգերը, բուրժուազիաները և աշխատում են, շահագործական նպատակներով, աւելի խորացնել, ուժեղացնել այդ անտագոնիզմը։ Դրա ամենակարևոր ու ամենաֆաշիստական արտայայտութիւններից մէկն այն է, որ երբեմն այս կամ այն ազգութիւնը խորթ է յայտարարւում պետութեան մէջ՝ տիրող դասակարգի կողմից և սկսում են բացի լեզուական, կրօնական և այլն նաև քաղաքական ճնշումներ և սահմանափակումներ։ Օգտւելով իր ոյժից, գերակշռող ազգութեան տիրող դասակարգը, յենւելով պետական մեքենայի վրայ, զբաղւում է այս կամ այն մանր ազգութիւնը որոշ քաղաքական իրաւունքներից և ստեղծում է նրա համար մի դժոխային կացութիւն, որպիսին է, օր., հրէայ ազգի դրութիւնը Ռուսաստանում։

Այդ հանգամանքը աւելի ևս սուր, աւելի ևս պատօլոգիական ընաւորութիւն է տալիս ազգային հարցին։

Ինչպէ՞ս լուծել այդ ազգային հակասութիւնները—ահա մի հարց, որ դնում է իր առաջ ազգային պրոբլեմ անուն տակ ժամանակակից պետական իրաւունքը։ Դիմենք այդ հարցին։

Զանազան դասակարգեր զանազան պատասխաններ են տալիս այդ հարցին, զա-

նաղան միջոցներ են առաջարկում այդ չարիքի դեմ։

Պետական իրաւունքի բուրժուական-նացիոնալիստական դպրոցը առաջարկում է լուծել ազգային հարցը, ըստ երևոյթին, շատ հասարակ կերպով։ Նա առաջարկում է ուղղակի ոչնչացնել ժամանակակից խաշոր միջազգային պետութիւնները, բաժանել նրանց մի քանի առանձին ազգային պետութիւնների։ Իշխող ազգութեան բուրժուազիայի թեորետիկները ստեղծել են մի սկզբունք, որ ասում է. ամեն պետութիւն պետք է ազգութիւն լինի, և նա, այդ բուրժուազիան, առաջնորդելով այդ սկզբունքով, աշխատում է բոլոր միջոցներով մի ազգութիւն դարձնել պետութեան սահմաններում ապրող բազմաւեղու և բազմայեզ ժողովուրդը։ Դա իշխող ազգութեան յարձակողական նացիոնալիզմն է (նկատենք, ի միջի այլոց, փակագծում, որ վերև յիշած պրոֆեսոր Գեսենն էլ, մեր կազմների պարտուլներից մեկը, կողմակից է այդ թեորիային։ Տես նրա վերև յիշած «Народъ и нація» աշխատութիւնը)։

Դրա հակառակը և իբրև պատասխան դրան, մանր և հալածուող ազգերի բուրժուազիան յայտարարեց իբրև սկզբունք. ամեն ազգութիւն պետք է պետութիւն լինի։ Եւ այդ սկզբունքի համեմատ հալածած ազգերի բուրժուազիաները ձգտում էին

անդամահատել ժամանակակից մեծ պետութիւնները։ Սկզբներում նրանք կողմակից էին բացարձակ բաժանման (սեպարատիզմին)։ Այժմ նացիոնալիստների մեծամասնութիւնը դարձել են ֆեդերալիստներ։ Ըստ կզբունքով, ըստ էութեան, նրանք մնացել են անփոփոխ. նրանք պահանջում են, որ ամեն մի ազգութիւն միանգամայն ինքնամփոփ և անկախ քաղաքական միութիւն լինի, որ քաղաքական գերիշխանութիւնը, սուվերենիտետը, սլատակնի առանձին ազգերին, միայն նշանք դեմ չեն այժմ, ընդհանրապէս վերցրած, որ այդ ազգային ինքնիշխան մարմինները ֆեդերատիվ կապերով կապվեն միմեանց հետ։ Այդպիսով, ուրեմն, լուծել ազգային հարցը, ըստ նացիոնալիստական դպրոցի՝ նշանակում է բաժանել ժամանակակից միջազգային պետութիւնները մի քանի ազգային պետութիւնների։

Ինչպես և կայանում պետական իրաւունքի բուրժուական-նացիոնալիստական դպրոցի «տեսական մեղքը»։—Ազգային այն ֆետիշիզմի մեջ, որի մասին մենք խոսեցինք յոդուածի սկզբում։ Բուրժուական հասարակական մտածողութիւնը խորթ է և դեռ միշտ և խորթ է մինչև օրս էլ (որ չափով նա պահպանել է իր հարազատութեամբ) զարգացման կամ էվոլիւցիայի գաղափարը։ Նա քննում է ազգութիւնը, որ-

պէս մի «յաւիտենական», «ի սկզբանէ» գոյութիւն ունեցող կատեգորիա։ Նա նայում է նրան, որպէս մի բնական (այսինքն բնութիւնից արուած) բանի, որը ինքն ըստ ինքեան ունի որոշ «իմմանենտ», իրանից անբաժանելի յատկութիւններ։ Ազգութիւնների մեծ մասը պետութիւններ են կամ պետութիւններ են եղել, հետևապէս պետութիւն լինելը մի բնական պահանջ է ամեն մի ազգութեան համար։ «Ազգային գաղափարը» ինքն ըստ ինքեան անհրաժեշտ և հասկանալի է դարձնում այդ պահանջը։ Ժամանակակից միջազգային պետութիւնների մէջ մտնող առանձին ազգերը կորցրել են իրանց քաղաքական ինքնուրոյնութիւնը մեծ մասամբ բռնութեան ու նուաճումների միջոցով—ահա ձեզ մի նոր ինվիճելի արգումենտ, որ անհրաժեշտ է դարձնում (կարելիութեան մասին հարց չի դրուում, որովհետև ըստ բուրժուական իդեալիզմի՝ ինչ որ անհրաժեշտ է, այն կարելի է)—«վերականգնել ազգերի ոտնահարուած, բռնաբարուած իրաւունքները»։ Եւ մեկնելով այդ ազգային ֆետիշիզմից, նացիոնալիստները պահանջում են, ինչպէս ասացինք, անդամահատել միջազգային պետութիւնը և կազմել նրանից,—սեպարացիայի, կամ ինչպէս նկատեցինք այժմ աւելի յաճախ՝ ֆեդերացիայի հիմունքներով—առանձին սուվերէն ազգային-քաղաքական մարմիններ։

Ինչպէս է նայում խնդրին սոցիալ-դեմոկրատիան։

Մենք գիտենք, որ ազգութիւնը, որպէս հասարակական կատեգորիա—պատմական, այսպէս ասած «անցողական» երևոյթ է և ոչ «բնական», «յաւիտենական»։ Մենք գիտենք, որ եթէ այսօր, ներկայ պատմական շրջանում, ազգութիւնը որպէս բնական կատեգորիա, կազմում է պետութեան բնական հիմքը, անցած շրջաններում պետութեան (հասարակական-քաղաքական կազմակերպութեան) այդ հիմքը կազմել են վերև յիշուած որսորդական խմբակցութիւնները, համայնքները, ցեղերը և այլն։ Ի՞նչ էր լինում որսորդական խմբերի կամ համայնքների հետ, երբ հասարակութիւնը՝ տնտեսական-արդիւնագործական ոյժերի զարգացման շնորհիւ՝ անցնում էր դէպի հասարակական-քաղաքական կազմակերպութեան աւելի բարձր ձևերը, երբ հասարակական-քաղաքական սուվերենիտետը անցնում էր, օր., որսորդական խմբի ձեռքից՝ համայնքի ձեռքը, կամ համայնքի ձեռքից՝ ցեղային միութեան ձեռքը և այլն։ Որպէս որոշ մարդկային խմբակցութիւններ իրանց բնական բովանդակութեամբ, որպէս, այսպէս ասած, նիւթ—նրանք չէին դադարում ի հարկէ գոյութիւն ունենալուց, բայց դադարում էին լինել քաղաքական կատեգորիաներ։ Արհեստական միջավայրը (искус-

ственная среда) դառնում էր բնական միջավայր։ Ճիշտ նույնը պետք է ասել և այն ազգերի մասին, որ մտնում են այժմ խոշոր կապիտալիստական միջազգային պետութիւնների մէջ։ Նրանք, ընդհանրապէս վերցրած, դադարում են լինել քաղաքական կատեգորիաներ, նրանք դառնում են այդտեղ «բնական միջավայրեր»։ Սհա թէ ինչու սոցիալ-դէմոկրատիան չի գտնում անհրաժեշտ ամեն դէպքում «վերականգնել ազգերի բռնաբարած իրաւունքները», ամեն մի ազգութիւն դարձնել պետութիւն։ Նա չի դնում իր առաջ այդ տեսակ սկզբունք, որովհետև այդ սկզբունքը, որպէս այդպիսին, կը հակասէր ներկայիս պատմական տենդենցիային, հասարակական-տնտեսական զարգացման ընթացքին։

Բաւական է յիշել մեր ասածները ազգային հարցի էութեան մասին, որպէսզի հասկանալ նացիոնալիզմի առաջադրած միջոցի ամբողջ անհեթեթ և ռեակցիոնէր բնաւորութիւնը։ Մեր այս դնահատութիւնը պարզելու համար կը բերենք մի համեմատութիւն։

Երբ ժամանակակից կապիտալիստական արդիւնաբերութեան զարգացման հետ սկսեց որոշակի կերպով արտայայտուել նրա մէջ պարունակող զարհուրելի հակասութիւնը, որի մասին յիշեցինք քիչ վերև, այսինքն մի կողմից խոշոր արդիւնաբերութեան օգտակարութիւնը, միւս կողմից, մասսաների պրոլետարիզացիան, աղքատացումը, սարսափելի կացումը,—բարեսիրտ ու բարեհոգի հասարակական գործիչներից շատերը սոցիալական այդ պրոբլեմը «արմատապէս» լուծելու համար, առաջարկում էին ուղղակի ոչնչացնել խոշոր արդիւնաբերութիւնը, կապիտալիզմը, և վերադառնալ միջնադարեան մանր արդիւնաբերութեան և համքարական կարգերին։

Նացիոնալիստները անում են նոյն սխալը, ցոյց են տալիս նոյն միամտութիւնը, անհասկացողութիւնը պատմական զարգացման օրէնքների վերաբերմամբ (որ չափով նրանց մէջ չի խօսում բուրժուական դասակարգային ընդդէմ), ինչ որ այդ բարեսիրտ ուտոպիստները։ Զգտելով յետ շրջել պատմութեան անիւը, խոշոր միջազգային պետութիւնները բաժանելով մանր ազգային պետութիւնների, նրանք նոյնքան ռեակցիոնէր են, որքան և այդ մանր արդիւնաբերութեան կողմնակիցները։

Մենք ասացինք, որ ժամանակակից խոշոր միջազգային պետութիւնները, արդիւնք են կապիտալիստական արդիւնագործական յարաբերութիւնների զարգացման։ Որ ազգային հակասութիւնները և ներհակութիւնները անհրաժեշտ բաղկացուցիչ մասն են այն մեծ սոցիալական հակասութեան, որ գոյութիւն ունի ժամանակակից բուրժուական հասարակութեան մէջ և որ կոչւում է կապիտալ եւ աշխատանքի պրո-

բլեմ։ Ազգային հակասութեան կատարեալ վերացումը, ուրիշ խօսքով՝ ազգային հարցի արմատական լուծումը անհնարին է, քանի դեռ գոյութիւն ունի կապիտալիստական արդիւնաբերութիւնը։ Այդ հակասութիւնը կարող է վերանալ միայն այն ժամանակ, երբ վերջ կը դրուի ներկայ սոցիալական կարգերին, երբ աշխատանքը կազատագրուի կապիտալի լծից։ Այդ պատճառով միանգամայն ճշմարիտ է մեր մեծ ուսուցիչ Կարլ Մարքսը, երբ նա ասում է, «միմիայն մասնաւոր սեփականութեան ոչնչացումը կարող է վերջ տալ ամեն տեսակ բռնութեան և շահագործութեան—մարդու շահագործութեան միւս մարդկանց կողմից, հասարակութեան մի մասի շահագործութեան միւս մասի կողմից, մի ազգի շահագործութեան միւս ազգերի կողմից»։

Ինչումն է կայանում այդ դէպքում մեր վերաբերմունքը դէպի ազգային խնդիրը ներկայումս, քանի դեռ գոյութիւն ունի բուրժուական հասարակութիւնը։

Ազգային և միջազգային սկզբունքների ընդհարման ժամանակ, ընդհանրապէս խօսելով, պէտք է ասենք, որ մեր համակրանքը պէտք է լինի, պարզ է միջազգային սկզբունքի կողմը։ Այդ բղխում է պրոլետարիատի օբյեկտիւ, տնտեսական դրութիւնից։ Նա այն դասակարգն է, որ մարմնացնում է իր մէջ միջազգայնութեան գաղափարը։ Ամեն մի փորձ «արմատապէս» լուծելու ազգային հարցը ներկայ կարգերում, այնպէս լուծելու, որ անհնարին դառնար ամեն մի ազգային ճնշում ու թշնամութիւն, կը բերէր մեզ դէպի ոչինչ չլուծող ռէակցիներ նացիոնալիզմը։ Մեզ համար ներկայումս հարցը դրուում է այսպէս. ինչ անել, որպէսզի ըստ հնարաւորին դիմադրել կապիտալիստական զարգացման աւերիչ, վնասակար տենդենցիաներին, որ անխուսափելի են դարձնում ազգային թշնամութիւնը։ Մեզ համար չի կարող գոյութիւն ունենալ իբրեւ ընդհանուր սկզբունք՝ ժամանակակից միջազգային պետութիւնների անդամահատութիւնը և ազգային՝ բոլորովին բաժանուած թէ ֆեդերատիւ կապերով կապուած՝ պետութիւններ վերաստեղծելը։ Խոնարհելով նոր, աւելի բարձր տեսակի պետական ֆորմացիաների փաստի առաջ, մենք կարող ենք խօսել միայն այն մասին, թէ ինչպէս դիմադրենք այն բացասական տենդենցիաներին, որ բղխում են այդ նոր ձևերից։

Ի՞նչ միջոցներ ունենք մենք մեր արամադրութեան տակ այդ նպատակին հասնելու համար։ Ի՞նչը կարող է թուլացնել ազգային ճնշումը, այն ճնշումը, որ գործադրւում է մանր ազգերի լեզուի, խղճի, սովորութիւնների վրայ և այլն։ Ի՞նչը կա-

ղող է զրկել իշխող դասակարգերին հնարաւորութիւնից՝ օրէնքից դուրս յայտարարելու այս կամ այն ազգը, սահմանափակելով նրա իրաւունքները, և այլն։

Մեր պատասխանը.—ժողովրդապետութեան սկզբունքի կատարեալ ընդունելութիւնը, դեմոկրատական քաղաքական կարգերի լիակատար իրականացումն։

Միակ միջոցը, որով պրոլետարիատը և ժողովրդական լայն մասսաները առհասարակ կարող են պաշտպանուել բուրժուական կարգերի անծայր հակասութիւնների ու շահատակութիւնների դէմ, նրանց թւում և ազգային հալածանքների դէմ—դեմոկրատիայի գաղափարն է։

Եւ այդ պատճառով միջազգային սոցիալ-դեմոկրատիան, ամենուրեք, անհրաժեշտօրէն, որտեղ նա գործ ունի ազգային հարցի հետ, դնում է իր ծրագրի մէջ իբրև ընդհանուր սկզբունք, ընդհանուր պահանջ, երեք բան։

1. Քաղաքացիական կատարեալ հաւասարութիւն պետութեան բոլոր հպատակների համար—անխտիր ազգից ու ցեղից։

2. Ազգային կուլտուրայի զարգացման, ուրիշ խօսքով՝ լեզուի, խղճի, գրականութեան և այլն կատարեալ ազատութիւն։

3. Քաղաքական ինքնորոշման իրաւունք պետական կազմի մէջ մտնող բոլոր ազգերի համար։

Ի՞նչ են նշանակում այդ երեք կէտերը։

Քաղաքացիական հաւասարութիւնը անկարելի պէտք է դարձնէ ամեն մի օրէնսդրական սահմանափակում այս կամ այն ազգի վերաբերմամբ։ Ամեն մի քաղաքացի հաւասարազօր տէր է իր պետութեան սահմաններում և ոչ ոք իրաւունք չունի բռնանալու նրա վրայ, ճնշելու նրան իր ազգային ծագումի համար։ Երկրորդ. լեզուների վերայ ճնշումը պէտք է վերացուի։ Ամեն ոք կարող է խօսել և կրթուել այն լեզուով, որով նա ցանկանում է, որով նա կարող է, որպէս նա աւելի լաւ և աւելի ազատ կարող է զարգանալ։ Ազգային կուլտուրան պէտք է ազատ և անձեռնմխելի լինի։ Մի պետութեան մէջ ապրող ազգերի միջև մերձեցումը ցանկալի է, անհրաժեշտ է և անխուսափելի է, բայց այդ պէտք է լինի խաղաղ զարգացման և ասիմիլիացիայի միջոցով և ոչ արհեստական կերպով, բռնութեան ու հալածանքների միջոցով։ Ոչ ոքի համար լեզուի, գրականութեան ճնշումը և սահմանափակումները այնքան զգալի, այնքան ճնշողական չեն, որքան պրոլետարիատի համար. և նա պահանջում է լեզուի կատարեալ ազատութիւն՝ դպրոցներում, դատարաններում, հասարակական ժողովներում և այլն։ Նոյնպէս ոչ ոք իրաւունք չպէտք է ունենայ բռնանալու այս կամ այն ժողո-

վրդի կրոնական հայեացքների, սովորութիւնների վրայ և այլն։

Ի՞նչ է նշանակում երրորդ պահանջը— քաղաքական ինքնորոշման իրաւունքը պետական կազմի մէջ մնող բոլոր ազգերի համար։

Երբ մենք խօսում ենք այն մասին, թէ ինչպէս է վճռում ազգային հարցը պետական իրաւունքի բուրժուական-նացիոնալիստական դպրոցը և հակադրում ենք նրան մեր լուծումը, մենք ի հարկէ այնպէս աբսոլիւտ և կատեգորիկ կերպով չենք ժխտում սեպարատիզմը կամ ֆեդերալիզմը, ինչպէս աբսոլիւտ և կատեգորիկ կերպով նացիոնալիստները պնդում են նրանց վրայ։ Եթէ այդպէս լինէր, մենք կը լինէինք մեր հակառակորդներին արժանի մետաֆիզիկներ և ոչ դիալեկտիկներ (այդ մասին աւելի մանրամասն տես ներքև)։ Հնարաւոր են դրութիւններ, երբ այս կամ այն ազգի վերաբերմամբ մենք կը գտնենք աւելի ցանկալի և անհրաժեշտ ֆեդերացիան կամ նոյն իսկ կատարեալ անջատումն։ Այդպիսի դէպքերի համար երկրի սահմանադրութիւնը պէտք է ապահովէ քաղաքական ինքնորոշման իրաւունքը։ Կամ կարող է լինել այնպիսի դրութիւն, երբ մի որևէ ազգ (նրա թւում, ի հարկէ, և պրօլետարիատը), որքան էլ այդ հակառակ լինէր նրա ըէալ, օբեկտիւ շահերին, պահանջում է բաժանումն և պատրաստ է զէնքը ձեռքին կը-ուելու իր պահանջի համար։ Արդեօք կառավարութիւնը կամ պետական իշխանութիւնը իրաւունք պէտք է ունենայ այդպիսի դէպքում դիմելու բռնի ոյժի և ստիպելու նրան խոնարհուել իր առաջ։ Սօցիալ-դեմոկրատիան չի կարող երբէք թոյլ տալ այդ բանը։ Պետական սահմանադրութիւնը պէտք է արգելէ կենտրոնական իշխանութեան դիմելու զէնքի օգնութեան, «նուաճելու» և բռնի կերպով ենթարկելու իրան այս կամ այն ազգութիւնը։ Եւ ինքնորոշման իրաւունքը տալիս է մեզ այդ անհրաժեշտ ապահովութիւնը։ Նա կարող է գործադրուել շատ հաղուագիւտ դէպքերում, բայց և այնպէս նա պէտք է լինի իբրև պահանջ մեր ծրագրի մէջ։

Ահա թէ ինչ և միայն ինչ, ընդհանրապէս ասելով (դարձեալ շեշտում ենք վերջինս), կարող է պահանջել պրօլետարիատը ներկայ բուրժուական հասարակութիւնից։

Կրկնում ենք, այդ բոլորով չի կարելի վերջնականապէս առաջը առնել ազգային թշնամութիւնների և հալածանքների։ Բանի դեռ գոյութիւն ունի տնտեսական կախումը, տնտեսական ստրկութիւնը, իշխող դասակարգերը կօգտուեն ամեն միջոցից ճընշելու և շահագործելու ժողովրդական մասսաները, նրանք կաշխատեն միշտ իրանց դասակարգային կռիւը դարձնել ազգային

կոփ, կաշխատեն գրգռել մասսաների մէջ ազգային բնազդները, կը զարգացնեն նրանց ազգային նախապաշարմունքները և թշնամութիւնը, որպէսզի օգուտն յետոյ գրանցից իրանց շահերի տնտեսէից և այլն։ Բայց աւելին, ինչպէս ասացինք, չի կարելի ձեռք բերել ներկայ պայմաններում։

Ով խոստանում է պրոլետարիատին տալ աւելի քան այդ, ով խոստանում է անմիջապէս, արմատապէս և վերջնականապէս լուծել ազգային հարցը, նա—կամայ թէ ակամայ, գիտութեամբ թէ անգիտութեամբ, բարի թէ չար նպատակներով—խաբում է պրոլետարիատին։

Իսկ սոցիալ-դէմոկրատիան չի ուզում խաբել պրոլետարիատին, որովհետև նա—ինքը այդ պրոլետարիատն է, նրա գիտակից մասն է։

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

Մինչև այժմ մենք խօսում էինք ընդհանրապէս ազգային հարցի մասին, խօսենք այժմ մասնաւորապէս ազգային հարցի մասին Ռուսաստանում։

Որքանք էին մեր ընդհանուր դիտողութիւնները ընդհանրապէս այդ հարցի մասին։

Մենք փորձեցինք ցոյց տալ որ ազգային հարցը, իր ժամանակակից իմաստով, ծնունդ է տիրող կապիտալիստական կարգերի և կազմում է այդ կարգերի հետ կապուած, XIX դարի մեզ ժառանգութիւն թողած սոցիալական մեծ պրոբլեմի մի մասը։ Մենք ասացինք, որ քանի դեռ չի լուծուել այդ պրոբլեմը, ազգային ճնշումները և հնարաւոր ազգային հարցը չի դադարի գոյութիւն ունենալ, ինչպէս չի դադարի գոյութիւն ունենալ ճնշումը, շահագործութիւնը առհասարակ, որ ազգային հալածանքը ու ճնշումների դէմ կուռելու միակ միջոցը ներկայ հասարակութեան մէջ դէմոկրատական սկզբունքի յաղթանակն է ընդհանրապէս և

ազգերի հաւասարութեան և լեզուների, դաւանանքների և այլն ազատութեան սկզբունքը մասնաւորապէս։ Մենք ասացինք, որ պատմական էւոլիւցիան ստեղծում է նոր՝ հետզհետէ աւելի ու աւելի խոշոր տնտեսական օրգանիզմներ, տանում է մեզ դէպի պետական կեանքի նոր ձևեր, դէպի խոշոր միջազգային պետութիւնները, և մենք ըէակցիոնէր անուանեցինք այն մարդկանց, որոնք առաջարկում են իբրև ընդհանուր միջոց, իբրև ընդհանուր սկզբունք՝ դառնալ դէպի յետ և բաժանել ժամանակակից պետութիւնները ազգային ջաղաքական մարմինների՝ բոլորովին անկախ կամ կապուած ֆեդերատիւ կապերով։

Եւ մենք շարունակ շեշտում էինք, որ այդ ասում ենք ընդհանրապէս, ի նկատի ունենալով պատմական ընդհանուր տենդենցիան, մի կողմ թողնելով առանձին դէպքերի, բացառութիւնների խնդիրը։

Այժմ մեզ հարկաւոր է խօսել մի առանձին դէպքի, մի որոշ պետութեան մասին և մենք պարտաւոր ենք աւելի կոնկրետ կերպով մօտենալ խնդրին։

Այն, ինչ որ ճշմարիտ է ընդհանրապէս, կարող է երբեմն սխալ լինել մասնաւորապէս։ Մենք գիտենք, որպէս մարքսիստներ, որ բացարձակ վերացական ճշմարտութիւններ չկան, որ ճշմարտութիւնը միշտ կոնկրետ է, մեզ համար չկայ «այսն այն և

ոչն ոչ»։ Եթէ մենք ընդհանրապէս ասում ենք, որ ներկայումս պատմական տենդենցիան տանում է դէպի ազգերի միացումն և ոչ դէպի բաժանումն, դա դեռ չի նշանակում, որ միշտ և ամեն տեղ, ամեն մի առանձին դէպքում, մենք դէմ պէտք է լինենք բաժանման և կոզմնակից միացման, կենդրոնացման։ Ընդհակառակը, կարող են լինել դէպքեր, որ հէնց մեկնելով մեր ընդհանուր դիտողութիւններից և ի նկատի ունենալով ժամանակի և տեղի պայմանները, կարող ենք կոզմնակից լինել՝ այս ինչ պետութեան անդամահատելուն։ Եւ դեռ աւելին կասենք. ամեն մի առանձին պետութեան ձէջ, ամեն մի առանձին ազգութեան հարցը մենք պէտք է քննենք առանձին և անկախ, իր ուրոյն պայմանների մէջ։ Կարող է պատահել, որ այս ինչ ազգութեան վերաբերմամբ աւելի նպատակայարմար կը լինի պահանջել անջատումն, կամ ֆեդերացիա, կամ աւտոնոմիա։

Այդ կարող է լինել այն դէպքում, երբ այս կամ այն առանձին ազգութեան տընտեսական շահերը հակասում են նրա հետ մի պետական մարմին կազմող միւս ազգերի շահերին, ուրիշ խօսքով, երբ այդ ազգութիւնը փաստօրէն մի տնտեսական-հասարակական օրգանիզմ չի կազմում իր կենակից միւս ազգութիւնների հետ։ Կամ այն դէպքերում, երբ թէև տնտեսական

օբեկտիւ ոչ մի հիմք չկայ, բայց շնորհիւ իրական դրութեան, իրանց իսկական շահերի թիւր ըմբռնման ազգային մասսաների կողմից ստեղծւում են հոգեբանական այնպիսի պայմաններ, որ այլ ևս անկարելի է դառնում ընդհանուր կեանքը։ Այդ դէպքերը, թէ առաջին և թէ մանաւանդ երկրորդ տեսակի, կարող են ներկայանալ իբրև բացառութիւններ ընդհանուր օրէնքից, բայց և այնպէս նրանց չի կարելի անտես առնել և տալ մի վերացական, «ընդհանուր», «սկզբունքային» որոշում՝ առանց բացառութեան բոլոր դէպքերի համար։ Ուրիշ խօսքով. եթէ մենք ասում ենք, որ մենք դէմ ենք ֆեդերալիզմին, իբրև ընդհանուր սկզբունքի, այդ դեռ չի նշանակում, թէ մենք սկզբունքով հակաֆեդերալիստներ, սկզբունքով ցենտրալիստներ ենք։ Պետական կազմի այս կամ այն ձևը մեզ համար սկզբունքի հարց չէ, այլ բաղաքական նպատակայարմարութեան հարց։

Մեր միակ հիմնական սկզբունքը, հիմնական կրիտերին՝ երկրի տնտեսական և կուլտուրական բարգաւաճումն է, մարդկանց բարօրութիւնը։ Իսկ դրա համար մենք ունենք շատ որոշ, շատ ըմբռնելի և կոնկրետ մի չափ։ Դա պրոլետարիատի դասակարգային շահերն են, նրա միջազգային ազատագրական շարժման շահերը։

Երկրի տնտեսական-կուլտուրական զարգացումը ամենաուերտ կերպով կապված է այժմ պրոլետարիատի պահանջների հետ և համապատասխանում է նրա ազատագրութեան շահերին։

Երբ 60-ական թուականներին Լեհաստանը ապստամբեց, Կարլ Մարքսը կողմակից էր նրա կատարեալ անջատման և նրա հետ միասին բոլոր նրա ժամանակակից սոցիալիստները։ Մինչդեռ այսօր ոչ միայն սոցիալ-դեմոկրատիան, այլ և բուրժուական իդեալները դէմ են Լեհաստանի անջատմանը Ռուսաստանից։ Ի՞նչ է այդ «հակասութեան» այդ «պարադոքսի» պատճառը.—այն, որ 60-ական թուականներին այլ էին թէ մասնաւորապէս Լեհաստանի և թէ ընդհանրապէս միջազգային պրոլետարիատի դրութիւնը, ընդհանուր քաղաքային սիտուացիան, և այլ ևս այժմ։ Այն, ինչոր օգտակար էր այն ժամանակ, վնասակար է այժմ և այլն։ Ահա թէ ինչ է նշանակում, որ «ճշմարտութիւնը միշտ կոնկրետ է», որ պէտք է միշտ ի նկատի ունենալ ժամանակի և տեղի պայմանները։

Զինուած այդ տեսակ մտածելու, հասարակական հարցերը քննելու մեթոդով, — սոց.-դեմ.-ի այժը և հպարտութիւնը կազմող դիալեկտիկական մեթոդով, —ինչպէս է վճռում արդեօք Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատիան ազգային հարցը Ռուսաստանում։

Ընդհանուր առմամբ նա կողմակից է,-

Ռուսաստանի սահմաններում ապրող ազգերի սերտ միացման, քաղաքական կենտրոնացման։ Ոչ մի ազգութեան համար նա չի պահանջում անջատումն և ոչ էլ ֆեդերատիւ կապ, որովհետև այդ բանը չի պահանջում ոչ մի ազգութեան պրոլետարիատի շահը մասնաւորապէս և Ռուսաստանի կամ միջազգային պրոլետարիատի շահը ընդհանրապէս։

Քննենք այժմ աւելի կոնկրետ կերպով, թէ ինչ առաւելութիւններ է ներկայացնում քաղաքական կենտրոնացումը Ռուսաստանում պրոլետարիատի շահերի տեսակէտից։

Պրոլետարիատի ոյժը կազմում է նրա դասակարգային միջազգային համերաշխութիւնը։ Թէ ներկայումս, այս յեղափոխութեան ընթացքում, և թէ ապագայ ազատ Ռուսաստանում, որքան աւելի սերտ կերպով միացած լինեն զանազան ազգութիւնների բանւորները, այնքան աւելի յաջող կերպով նրանք կարող են կուռել իրանց դասակարգային շահերի համար, այնքան աւելի կատարեալ կը լինի դեմոկրատիայի յաղթութիւնը ներկայումս և այնքան աւելի հաստատ նրա պահպանման և պրոլետարիատի դասակարգային կռւի յաջողութեան գարանտիան ապագայում։ Առանձին ազգային պետութիւնները, նոյն իսկ աւելի սահմանափակ ազգային առանձնացումները (ֆեդերացիան, աւտոնոմիան) պատնէշներ են կառուցանում զանազան ազգերի պրոլետարիատի միջև և բաժանում ու մանրացնում են նրանց դասակարգային կռիւը։

Բուրժուազիայի համար, որպէս իշխող դասակարգի՝ ձեռնտու կը լինի, եթէ երկիրը բաժանուի ըստ ազգութիւնների, որովհետև ամեն մի ազգային բուրժուազիա կարող է աւելի լաւ շահագործել յանուն «ազգային դաղափարի», «ազգային համերաշխութեան», յանուն «ազգային արդիւնաբերութեան բարգաւաճման» իր ազգային պրոլետարիատը։ Նա կարող է աւելի յաջողութեամբ կռւել ազգային պրոլետարիատի բաժանած և այդ պատճառով թուլացած դիմադրութեան դէմ։

Պրոլետարիատի համար, որպէս ճնշուած և ազատագրութեան դիմող դասակարգի համար անհրաժեշտ է ոյժերի միացումը, կենտրոնացումը, մինչդեռ բուրժուազիայի համար, որպէս իշխանութիւնը արդէն իր ձեռքը վերցրած դասակարգի՝ այնքան կարևոր չէ այդ։ Ընդհակառակը, երբ բուրժուազիան իշխանութիւն է ձեռք բերում, նա սկսում է ամեն տեղ գործել համաձայն divide et impera!—«բաժանիր և տիրիր!» հնչնաւոր սկզբունքի։ Բուրժուազիայի զանազան խաւերի մէջ, զանազան խմբերի մէջ սկսւում է մրցումը և նա դադարում է լինել մի կոմպակտ բանակ, որովհետև նա արդէն հասած է լինում իր նպատակին, ձեռք գը-

ցած է լինում քաղաքական իշխանութիւնը։ Նրան մնում է. կրկնում ենք, «բաժանել և տիրել»։ Նշանաւոր չէ՞ արդեօք, որ գերմանական բայխստագում 13 զանազան գոյների ու ձևերի բուրժուական կուսակցութիւնների հանդէպ կանգնած է մի հատ պրոլետարական — սոցիալ-դէմօկրատական կուսակցութիւն։ Այո՛, պրոլետարիատի համար օգտակար է, անհրաժեշտ է ոյժերի միացումը, կենտրոնացնումը՝ առանց ազգերի խտրութեան։ Միութեան մէջ է պրոլետարիատի ոյժը։ Իսկ այդ տեսակ մեծ միութիւն նա կարող է ունենալ միացեալ և անբաժան Ռուսաստանի միացեալ պարլամենտում։ Մի որև է մանր ազգութեան, օր., հայ, պրոլետարիատին աւելի մօտ է իր շահերով, իր պահանջներով ռուս պրոլետարիատը, քան հայ բուրժազիան, և նա գիտէ, որ միացած ռուս, վրացի և այլ պրոլետարիատի հետ ընդհանուր պետական պարլամենտում նա աւելի լաւ կարող է տոգալ իր տնտեսական և քաղաքական կարիքները, քան եթէ նա հարկադրուած լինէր միայնակ դրած ունենալ հայ բուրժուազիայի հետ «ազգային» պարլամենտում։

Ահա թէ ինչու պրոլետարիատը ընդհանրապէս կողմնակից է Ռուսաստանի քաղաքական կենտրոնացման։

Բայց, ասում են, կենտրոնացումը վնասակար է, որովհետև կենտրոնացումը անհրա-

ժեշտօրէն բերում է իր հետ բիւրօկրատիա։ Այդ ասողները ցոյց են տալիս, որ իրանք ոչ մի հասկացողութիւն չունեն պետական իրաւունք կոչուող գիտութեան մասին մի կողմից և մեր ծրագրի մասին միւս կողմից։ Բիւրօկրատիա նշանակում է կենտրոնացած ադմինիստրացիա, վարչական մարմին, իսկ մենք խօսում ենք քաղաքական կենտրոնացման մասին։

Եւ դա դեռ բաւական չէ, մեր ծրագիրը վարչական ձևերի նկատմամբ պահանջում է ապակենտրոնացում։ Այդ արտայայտւում է մեր ծրագրի 3 երորդ կէտով, որտեղ պահանջւում է. «տեղական լայն ինքնավարութիւն, շրջանային ինքնավարութիւն այն տեղերի համար, որ տարբերւում են իրանց ցեղային, կենցաղային կազմով և այլն»։ Հետևապէս քաղաքական կենդրոնացում և վարչական (կամ ադմինիստրատիւ) ապակենտրոնացում!—ահա թէ ինչ է գրուած մեր դրօշակի վրայ,—ուր մնաց, ուրեմն, բիւրօկրատիան...

Կանգ առնենք մի փոքր աւելի երկար շրջանային ինքնավարութեան պահանջի վերայ, որովհետև մեր ծրագրի այդ կէտն էլ, թէև կողմնակի կերպով, վերաբերում է ազգային խնդրին։

Նախ և առաջ ինչ է նշանակում «շրջանային ինքնավարութիւն» տերմինը։ Այդ մասին շատ մեծ շփոթութիւն է տիրում

մեղանում։ Խառնում են սովորաբար երեք հասկացողութիւններ — ինքնավարութիւն, աւտոնոմիա և ֆեդերացիա, մինչդեռ դրանք միանգամայն տարբեր բաներ են, որ անհրաժեշտ է խստիւ զանազանել միմեանցից։ Յաճախ դուք կը կարդաք մեր «ֆեդերալիստների» գրածքների մէջ. «մենք պահանջում ենք աւտոնոմիա, ֆեդերատիւ հիմքերի վրայ... մի խօսքով՝ կատարեալ ինքնավարութիւն»։ Քաղաքական հարցերի հետ քիչ թէ շատ ծանօթութիւն ունեցող ընթերցողը կարող է միայն ուսերը վեր քաշել այդ տեսակ «պահանջի» հանդէպ։ Այդ պատճառով աւելորդ չենք համարում կարճառօտ կերպով բացատրել այստեղ պետական իրաւունքի այդ երեք տերմինների նշանակութիւնը։

Ազգերի ֆեդերացիա նշանակում է մի այնպիսի պետական կազմ, երբ մի պետութեան մէջ ապրող զանազան ազգեր բաժանւում են մի քանի ինքնուրոյն ու ինքնիշխան քաղաքական մարմիններին։ Ամեն մի ազգութիւն սկզբից ունենում է իր հիմնադիր ժողովը, որ որոշում, է ինչ պայմաններով և ինչ կերպ կապել միւս ազգային միաւորների հետ։ Դրանից յետոյ իւրաքանչիւր ազգ ունի իր պարլամենտը (մեր խօսքը դէմօկրատական ֆեդերացիայի մասին է) և իր կառավարութիւնը, որոնք օրէնքներ են սահմանում և կառավարում

ազգութիւնը իրանց հայեցողութեամբ, առաջնորդւելով միայն այն մի քանի պայմաններով, որ մշակել են իրանք միւս ազգերի հետ։ Գոյութիւն ունի երկրում ընդհանուր պարլամենտ, բայց նրա որոշումները պարտադիր են այն չափով, որ չափով նրանք հաւանութիւն են գտնում ազգային պարլամենտի կողմից։ Վերջինս կարող է օրէնքներ հրատարակել, որոնք կը հակասեն ընդհանուր օրէնսդրութեան։ Մի խօսքով, ֆեդերացիայի ժամանակ մի ազգի քաղաքական սուվերենիտետը պատկանում է իրան այդ ազգին և մարմնանում է նրա ազգային քաղաքական հաստատութիւնների մէջ։ Ֆեդերացիայի ժամանակ՝ մաքուր, իսկական ֆեդերացիայի ժամանակ, քաղաքական կեանքի ծանրութեան կէտը գտնւում է ազգային պարլամենտների մէջ. ընդհանուր պարլամենտը և ընդհանուր քաղաքական կեանքը համեմատաբար երկրորդական տեղ են բռնում։

Այլ բան է աւտոնոմիան, որ բառացի նշանակում է ինքնօրինութիւն։ Ազգերի աւտոնոմիայի ժամանակ էլ գոյութիւն ունեն ազգային պարլամենտներ, բայց նրանց իրաւասութեան սահմանները որոշում է ընդհանուր Հիմնադիր Ժողովը։ Ազգային պարլամենտի հրատարակած օրէնքները պէտք է վերաբերւեն զուտ տեղական գործերին և, որպէս լրացուցիչ օրէնքներ, չը-

պէտք է հակասեն ոչ մի դէպքում ընդհանուր պետական օրէնսդրութեան։ Աւտոնոմիայի ժամանակ, այդպիսով, քաղաքական սուվերենիտետը պատկանում է ընդհանուրին, ամբողջ պետութեան ազգարնակութեանը՝ յանձին կենտրոնական պարլամենտի։

Եթէ համեմատելու լինենք միմեանց հետ ազգային աւտոնոմիան և ֆեդերացիան, մենք պէտք է ասենք, որ ֆեդերացիան աւելի մօտ է անջատման (սեպարացիային), կամ ուրիշ խօսքով՝ սահմանափակ անջատումն է, իսկ աւտոնոմիան աւելի մօտ է կենտրոնացման, ուրիշ խօսքով՝ սահմանափակ կենտրոնացումն է։ Այդպիսով, այդ երկու քաղաքական ձևերի մէջ կայ ոչ միայն քանակի, այլ և որակի տարբերութիւն։ Բայց կայ նրանց մէջ և նմանութիւն, ի հարկէ. երկու դէպքումն էլ պետութիւնը բաժանւում է ըստ ազգութիւնների, ազգերը դառնում են քաղաքականապէս ինքնամփոփ ու կազմակերպուած մարմիններ և քաղաքական իշխանութիւնը՝ թէև տարբեր չափերով, բաժանւում և ցրւում է ազգային պարլամենտներում։

Բոլորովին այլ բան է շրջանային ինքնավարութիւնը, որ պահանջում է մեր ծրագրով։ Նա չունի օրէնսդրական ոչ մի ֆունկցիա։ Նա ընտրովի, դէմոկրատական մի հաստատութիւն է, որ կոչուած է ընդհանուր պարլամենտի տուած օրէնքների հիման վրայ կառավարել ներկայ շրջանը (округъ), հոգալ նրա կոյտուրական, տնտեսական և վարչական կարիքները։ Բաւական է ծանօթանալ Ռուսաստանում գործող զեմստվոների հետ, ազատել նրանց միապետական-բիւրոկրատական սահմանափակումներից և օպեկայից, որպէսզի հասկանալ, թէ ինչ է նշանակում շրջանային ինքնավարութիւն։ Այդ ինքնավարութիւնն է, որ պահանջում է սոցիալ-դէմոկրատիան առանձին շրջանների համար, ինչպէս են, ենթադրենք, Անդրկովկասը, Սիբիրը, կամ Ռուսաստանի կենդրոնական բայոնը, հիւսիսային բայոնը և այլն։

Բաւական չէ՞ արդեօք այդ լայն ինքնավարութիւնը՝ հոգալու համար բոլոր տեղական պէտքերը և ըստ կարելոյն ազատ պահելու երկիրը բիւրոկրատիայի սարսափներից, ենթարկելով ադմինիստրացիան տեղական ինքնավարութեան օրգաններին։ Մենք կարծում ենք, միանգամայն բաւական է։ Իսկ աւտոնոմիայի և ֆեդերացիայի պահանջները, որ դնում են աւելի կամ պակաս չափով որոշուած բուրժուական կուսակցութիւնները, բղխում են բոլորովին ուրիշ աղբիւրներից։ Առանձին մանր «ազգային» բուրժուազիաների նպատակն է քաղաքականապէս բաժանել և ջլատել պրոլետարիատի միջազգային ոյժը, ստեղծել սեփա-

կան «ազգային» շուկաները՝ այդ շուկանե-
րում անսահման իշխելու ախորժակներով։
Բայց, ինչպէս միշտ և ամեն տեղ, բուրժուա-
զիան այդ պահանջներ։ գնում է «աշխա-
տաւոր ժողովրդի», «պրոլետարիատի» ա-
նունից և աշխատում է անցկացնել իր ապ-
բանքը, այսպէս ասած, «կոնտրաբանդով»,
սոցիալիզմի դրօշակի տակ։

Մեզ կարող են առարկել, որ Ռու-
սաստանում ներկայումս ազգային ֆեդե-
բացիայի պահանջողներ համարեա թէ չը-
կան։ Պահանջում են մեծ մասամբ տերրի-
տորիական ֆեդերացիա։ Այդ ճիշտ է,
բայց միայն մասամբ և յամենայն դէպս չէ
փոխում եղած պահանջի բուրժուական-դա-
սակարգային բնոյթը։ Այդ ճիշտ չէ այն
մտքով, որ բուրժուական-նացիոնալիստա-
կան կուսակցութիւնները չեն հրաժարւում
ազգային ֆեդերալիզմի սկզբունքից, այլ մի-
այն «յետաձգում» են նրա իրականացումը։
Ազգային ֆեդերացիան դառնում է նրանց
համար մի տեսակ «ծրագիր-maximum»
(տես Դաշնակցութեան «թէօրետիկ» Մ.
Վարանդեանի «Հայրենիքի գաղափարը»),
իսկ առայժմ, չափազանց բարդ և անիրա-
գործելի տեսնելով այդ տեսակ ֆեդերա-
ցիան, նրանք բաւականանում են, բաժանե-
լով պետութիւնը ըստ տերրիտորիաների։
Տերրիտորիական ֆեդերացիան այդպիսով

բուրժուական նացիոնալիզմի «ծրագիր-minimum»-ն է ներկայումս

Դառնանք մեր ծրագրի միւս կէտերին,
որ վերաբերում են ազգային խնդրին։

Այդ կէտերն են.

ա) Դասերի (сословіе) ոչնչացումն, և
հաւասար իրաւունքներ բոլոր քաղաքացի-
ների համար՝ անկախ սեռից, կրօնից, ցեղից,
ազգութիւնից։ (ծրագ. § 7)

բ) Ազգաբնակութեան իրաւունքը՝ ստա-
նալու կրթութիւն մայրենի լեզուով, ապա-
հովուած պետութեան և ինքնավարութեան
օրգանների հաշուով՝ դրա համար հիմնուած
անհրաժեշտ ուսումնարաններով։ Ամեն մի
քաղաքացու իրաւունքը՝ ժողովներում բա-
ցատրուելու մայրենի լեզուով։ Պետականին
հաւասար՝ մայրենի լեզուի ներմուծումը բոլոր
տեղական հասարակական և պետական
հիմնարկութիւններում։ (ծրագ. § 8)

գ) Ինքնորոշման իրաւունքը պետութեան
կազմի մէջ մտնող բոլոր ազգութիւնների
համար։ (ծրագ. § 9))

Այս կէտերի հետ արդէն ծանօթ է ըն-
թերցողը մեր յօդուածի առաջին մասից։ Նը-
բանք պարունակում են իրանց մէջ այն
պահանջները, որ գնում է սոցիալ-դեմո-
կրատիան իբրև ընդհանուր սկզբունքային
պահանջներ ամեն տեղ, ուր նա գործ ու-
նի ազգային հարցի հետ։

Կանգ առնենք մի փոքր վերջին կէտի վրայ։

Մենք ասացինք արդեն վերև, ինչ է նշանակում ինքնորոշման իրաւունքը։ Տալով ազգային հարցին մի ընդհանուր լուծում Ռուսաստանի համար, մեր կուսակցութիւնը չի որոշում միանգամ ընդ միշտ, բոլոր առանձին ազգերի և բոլոր ժամանակների համար, որ նրանք իրաւունք չունեն այլ կերպ դասաւորելու իրանց քաղաքական կեանքը։ Մենք ասացինք, որ եթէ մենք ուրուագծում ենք ընդհանուր պատմական տենդենցիան և, մեկնելով նրանից, ասում ենք մի որոշ գործնական լուծում ազգային հարցին, դա դեռ չի նշանակում, որ մենք փակում ենք մեր աչքերը իրականութեան առաջ և ոչ մի դէպքում չենք ցանկանում խօսք անդամ լսել որև է աւտօնոմիայի կամ ֆեդերացիայի մասին։ Ով վերագրում է մեզ այդ տեսակ «դոգմատիկ» վերաբերմունք դէպի հասարակական-քաղաքական խնդիրները, նա ցոյց է տալիս, որ ինքը ոչ մի ծանօթութիւն չունի դոգմատիզմի և վերբալիզմի ամենակատաղի թշնամի մարքսիստական աշխարհահայեցողութեան հետ։ Կրկնում ենք, մեզ համար ցենտրալիզմի կամ ֆեդերալիզմի խնդիրը տրօղիւտ սկզբունքի հարց չէ, այլ քաղաքական նպատակայարմարութեան կամ պատմական տեխնիկայի հարց։ Եթէ մի որև է դէպքում մենք գտնենք նպատակայարմար պրոլետարիատի շահերի տեսակէտից աւ-

տօնոմիա կամ ֆեդերացիա պահանջել, մենք այդ կը պահանջենք։ Այդպիսի դէպքերում, պարզ է, առաջին խօսքը պատկանում է իրան այն ազգին, այն ազգի պրոլետարիատին, որին վերաբերում է խնդիրը։ Բերենք մի օրինակ, որ ընորոշում է մեր վերաբերմունքը դէպի այդ հարցը։

Մեր կուսակցութիւնը մինչև վերջին ժամանակները, ինչպէս ասացինք վերև, Ռուսաստանի ազգերից ոչ մէկի համար առանձնացում՝ այս կամ այն ձևով՝ չէր պահանջում։ Վերջին «միացուցիչ» կոչուած համագումարում մեր լեհացի ընկերները, 30 հազար կազմակերպուած բանուոր ունեցող և այդ բանուորների անունից խօսող լեհացի սոցիալ-դեմոկրատները, առաջարկեցին մտցնել մեր ծրագրի մէջ աւտօնոմիայի պահանջը Լեհաստանի համար։ Եւ համագումարը, ծանօթ լինելով այն մոտիւներին, որ դրդում են մեր լեհ ընկերներին դնել այդ պահանջը, յարգելով այդ մոտիւները, որպէս սոցիալ-դեմոկրատական մոտիւներ, և ճանաչելով լեհացիների ինքնորոշման իրաւունքը, ընդունեց այդ առաջարկը։ Սոցիալ-դեմոկրատիայի առաջ կեանքը, քաղաքական նոր սիտուացիան, դրել էր մի դիլեմա—կամ ընդունել աւտօնոմիայի պահանջը Լեհաստանի համար, կամ թողնել, որ ասպարէզին տիրանայ լեհական P. P. S.

կէս-սոցիալիստական, կէս-նացիոնալիստական կուսակցութիւնը, որ ֆեդերացիա է պահանջում Լեհաստանի համար առանձին Հիմնադիր Ժողովով։ Եւ լեհական սոցիալ-դէմոկրատիան, իսկ նրա հետ և ամբողջ Ռ. Ս.-Դ. Բ. Կ.-ինը, քաղաքական տակտ և իմաստութիւն ունեցան՝ ընտրելու չարիքների փոքրագոյնը։ Նրանք արտայայտեցին ֆեդերացիայի և հետևապէս առանձին Հիմնադիր Ժողովի դէմ և յօգուտ Լեհաստանի աւտօնոմիայի, որի իրաւասութեան սահմաններ ըկորոշէ ընդհանուր պետական Հիմնադիր Ժողովը։ Եթէ Լեհաստանի աւտօնոմիայի պահանջը դրւէր մի երկու-երեք տարի առաջ, նա կարող էր յայտարարւել սոցիալ-դէմոկրատիայի կողմից որպէս վնասակար, որպէս բուրժուական պահանջ, բայց այսօր, ի նկատի ունենալով փոխւած քաղաքական սիտուացիան, «ժամանակի և տեղի պայմանները», որ այնպիսի արագութեամբ փոխւում են յեղափոխական շնչանում, սոցիալ-դէմոկրատիան ինքն է դնում այդ պահանջը — մի բան, որ վերացական մտածողութեան տէր, աբսոլիւտ սկզբունքներով, մերկ ու «յաւիտենական» ֆորմուլաներով ապրող մարդիկ չեն կարողանում հասկանալ և մարսել, որ նրանք յայտարարում են, որպէս «հակասութիւններ»։

Մի երկու խօսք էլ անդրկովկասեան աւտօնոմիայի մասին, որ առանձնապէս հետաքրքիր է մեզ՝ կովկասցիներիս համար, որ մեր «ինքնորոշման» հարցն է։ Մեր կուսակցութեան տասնեակ հազարաւոր անդամների թւում Կովկասում, պատահում են անհատներ, որ արծարծում են այսօր անդրկովկասեան աւտօնոմիայի անհրաժեշտութեան հարցը։ Նրանց ձայները հնչում են այնպէս միայնակ և տարօրինակ, որ մենք ուշադրութիւն չէինք դարձնի այդ ձայների վրայ, եթէ, միւս կողմից, այդ պահանջը,—արդէն ոչ թէ աւտօնոմիայի, այլ ֆեդերացիայի պահանջը, — դրւած չլինէր կովկասեան մի քանի (հայ և վրացի) նացիոնալիստական կուսակցութիւնների ծրագրերում։

Թողնենք մի կողմ այն հարցը, թէ ինչ են հասկանում նրանք աւտօնոմիա, ֆեդերացիա ասելով (գուցէ երբեմն ոչ աւելի, քան հասարակ ինքնավարութիւն. յիշեցնում եմ հայ «քաղաքագէտների» խօսքերը. «Մենք ցանկանում ենք աւտօնոմիա՝ ֆեդերատիւ հիմունքների վրայ... մի խօսքով՝ կատարեալ ինքնավարութիւն»), թողնենք ասում ենք այդ, և հասկանանք այն, ինչ որ պէտք է հասկանալ այդ տերմինների տակ։

Ցանկանում են ստեղծել Անդրկովկասում մի պարլամենտ (ֆեդերալիստները նոյն իսկ Անդրկովկասեան Հիմնադիր Ժո-

ղով), որի ձեռքին պէտք է կենտրոնանայ քաղաքական իշխանութիւնը, մի դէպքում համարեա ամբողջովին, միւս դէպքում մասամբ։ Իրխում է արդեօք այդ պահանջը պրոլետարիատի և ժողովրդական լայն զանգուածի մասսաների շահերից։ Երբէք, և անա թէ ինչու։ Ամենից առաջ այն ընդհանուր դիտողութիւնը, որ մենք արեցինք վերևում ընդհանրապէս Ռուսաստանի պրոլետարիատի շահերի տեսակէտից, այն է՝ կենտրոնացման օգտակարութիւնը պրոլետարիատի դասակարգային կռուի համար։ Յետոյ՝ զուտ տեղական դիտողութիւններ։ Անդրկովկասը կազմում է արդէն Ռուսաստանի տնտեսական օրգանիզմի մի մասը և աւելի յետամնաց, աւելի անկուլտուրական մասը։ Իսկ այդպիսի մի մասի համար անհամեմատ աւելի ձեռնտու է, որքան կարելի է աւելի սերտ կերպով կապուած լինել ընդհանուր ռուսական օրգանիզմի հետ։ Այս կամ այն չափով բաժանուելով Ռուսաստանից, Անդրկովկասը կը դանդաղի իր տնտեսական և կուլտուրական զարգացման մէջ, իսկ այդ շատ վնասակար է պրոլետարիատի համար։ Երբորդ և զուցէ միւսներից ոչ պակաս կարևորութիւն ունեցող դիտողութիւնը.— Անդրկովկասը մի բազմալեզու և բազմացեղ զանգուած է, որտեղ ամեն մէկը կանգնած է տարբեր կուլտուրական բարձրութեան վրայ։ Եթէ պրոլետարիատի քաղաքական-դասակարգային կռուի ասպարէզը ամբողջովին կամ մասամբ մենք դարձնենք Անդրկովկասը, մենք կստեղծենք այստեղ մի այնպիսի դժոխք, որի նմանը դժուար է երևակայել, մինչև իսկ մեր առաջ ունենալով ներկայ թուրք-հայկական արիւնոտ դրաման։ Ամեն մի փոքր ազգութիւն իր քաղաքական կեանքը պէտք է սկսի կոտորածով, արիւնհեղութեամբ։

Մեզ պատասխանում են, որ ներկայ թուրք-հայկական կոտորածի պատճառը միապետական կառավարութեան պրովոկացիան է, իսկ ազատ Ռուսաստանում նա այլևս գոյութիւն չի ունենայ։ Զարաչարը սխալւում էք, պարոններ, եթէ կարծում էք, որ այն ժամանակ պրովոկատորներ չեն դանուի։ Ամեն մի ազգութեան մէջ կան պրովոկատորական տարրեր—այդ ազգութիւնների իշխող դասակարգերը՝ ազնուականութիւնը, հոգևորականութիւնը, բուրժուական որոշ խաւերը։ Ամեն անգամ, երբ այս կամ այն ազդեցիկ տարրին ձեռնտու կը լինի պրովոկացիա կազմակերպել (իսկ այդ կարող է շատ յաճախ պատահել կովկասեան աղջամուղջում), նա կը դրդռէ տգիտութեան հետ միշտ սերտ կապուած ազգային տարերութիւնը, ազգային ընազդները և... կբնոսի ժողովրդների արիւնը։

Կովկասեան պրոլետարիատի համար ոչ մի դէպքում ձեռնտու չէ պրովոկացիան և

կոտորածը, այդ պատճառով նա երբէք չի պահանջի այնպիսի քաղաքական կարգեր, որոնք անխուսափելի և իրոնիքական կարող են դարձնել ազգային կռիւը և արիւնհեղութիւնները։

Բայց եթէ նոյնիսկ կասկածելի լինէր այդ տեսակ ապագան Կովկասի համար ֆեդերացիայի կամ աւտոնոմիայի դէպքում, այնուամենայնիւ վնասակար և յետադիմական պէտք կը լինէր համարել այժմ, յեղափոխութեան ժամանակ, ազգայնական կատաղի թշնամութեան և ընդհարումների միջավայրում՝ դրած այդ տեսակ պահանջը։ Կը վերջացնենք մեր յօդուածը Կարլ Կաուցկու խօսքերով, որ նա ասում է հէնց այդ առիթով, իր «Ազգային հարցը Ռուսաստանում» գրքոյկի մէջ.

«Անկարելի է նախատեսել, թէ ինչ ձևեր կը ստանան ազգային հակասութիւնները և ազգային կռիւները ընդհանրապէս Ռուսաստանում և մանաւանդ Կովկասում, բայց հաստատ կարելի է ասել մի բան. քանի դեռ ընդհանուր կռիւը հին բէժիմի դէմ շարունակւում է, ոչ միայն բոլոր յեղափոխական մասսաների ընդհանուր շահն է պահանջում, որ ազգային բոլոր հակասութիւնները և պրոբլեմները, ըստ կարելոյն, յետ մղւեն, ասպարիզից, այլ և կուռող պրոլետարիատի անմիջական օգուտն է, որ նրա շարքերում թապաւորէ կատարեալ միջազգային համերաշխութիւն... Ամենամեծ պահանջը, որ անում է այժմ պրոլետարիատից Ռուսաստանի ազատագրութեան գործը—այդ՝ այն է, որ նա միացնէ բոլոր ռուսահպատակ ազգերը՝-յանուն ընդհանուր կռուի ցարի բռնակալութեան դէմ»։

[illegible]

Հայրենիքին... Ահեղաձայն մարգարէն սի-
դերի՝-Լոռուն ցրջապատած իւրի դեղեցի-
կութիւնովն մարմնավորեալ տիպն է։

0374 Ա 61
Ա 61
ԱԲՄ
2-4491

Լույս են տեսել

Բանվորական գրադարանի հետեւեալ հրատարակութիւնները՝

1) Հայրենասիրութիւն Կառուցկու. գինը՝ 3 կոպ.

2) Պետական դումա » » 3 »

3) Կոբչին սոցիալ-դեմոկրատները Վ. Բրակէի 8 »

4) Ազգային հարցը և Սոցիալ-դեմոկրատիան Ս. Շահումեանի 10 »

Գինը՝ 10 կոպ.

Հասցէն՝ Թիֆլիզ, «Կայծ»-ի խմբագրութեան

«Ազգային գրադարան»
NL0194213